

իր դպրոցական եւ առհասարակ ամէն կարգի մշակութային գործերը: Իսկ «ազգային փոքրամասնութիւն» ասելով էլ օրէնքը հասկանում է էսթոնիայի բնակչութեան մաս կազմող ամէն մէկ իմբակ, որ առնուազն երեք հազար անհատներէն է բաղկացած:

Առանձնապէս կարեւոր է հետեւեալ պարագան: Պետական օրդանները չեն, որ իրաւասու են որոշելու այս կամ այն քաղաքացիի ազգային պատկանելիութեան փափուկ խնդիրը, այլ՝ ամէն մէկ անհատ ինքը, իր յօժար կամքով եւ վնուով: Ասել է՝ էսթոնիայի ամէն մէկ քաղաքացի, առանց ծագման եւ կրօնի խտրութեան, ազատ է որոշելու, թէ ի՛նչ ազգութեան է պատկանում ինքը — պետական՝ էսթոնացիին, թէ՞ այս կամ այն փոքրամասնութեան: Ուրեմն, ամէն մի էսթոնացի անդամ կարող է որոշել իր համար — այս կամ այն պատճառով — որ, օրինակ, գերման կամ ռուս ազգային փոքրամասնութեան անդամ է ինքը: Եւ ընդհակառակը: Ու ոչ մէկը դրանցից, ոչ պետական (էսթոն) ազգութիւնը եւ ոչ էլ փոքրամասնութիւնները, իրաւունք ունին մերժելու տուեալ անհատի որոշումը իր ազգային պատկանելիութեան մասին:

Անհատի կատարեալ ազատութեան սկզբունքն է ահա, որ ճանաչուած եւ կիրառուած է էսթոն օրէնքի կողմից: Կարելի է գուցէ, իհարկէ, որոշ առարկութիւններ առաջ բերել այդ ըմբռնողութեան դէմ: Բայց ներկայ դէպքում դա առանձին կարեւորութիւն չունի, նրկատի ունենալով մանաւանդ բոլոր քաղաքացիներին կատարեալ հաւասարութեան սկզբունքի ճանաչումը այդ երկրում, — անխտիր կեանքի բոլոր ասպարէզներում:

Ազգային ամէն մի փոքրամասնութիւն էսթոնիայում պահում է իր անդամների ցանկը, այսպէս կոչուած «ազգացուցակը», որի մէջ հարկադրաբար ամէն մէկի անունը պիտի մուծուի, ով այդ մասին յայտնում է ցանկութիւն: Ամէն մի փոքրամասնութեան յատուկ «ազգացուցակի» մէջ մտնող բոլոր անհատներն էլ միասին առած՝ կազմում են իրենց ազգային ինքնավարութեան ենթական եւ առարկան միանգամայն:

Ամէն մի ազգային փոքրամասնութիւն

կազմում է մէկ ինքնավար մարմին, մշակութային վարչութիւն, էսթոնիայի դաւառական վարչութեանց օրինակով: Այն տարբերութեամբ, որ էսթոնիոյ ամբողջ պետութիւնը, ազգային փոքրամասնութեանց (գերման, ռուս, չվէտ, հրեայ) մշակութային գործերը վարելու տեսակէտից, կազմում է մէկ հատիկ շրջան միայն:

Ազգային մշակութային ինքնավարութեանց իրաւասութեան մէջ են մտնում, ինչպէս որ օրէնքն է սահմանում, «կազմակերպումը, վերահսկողութիւնը եւ վարումը տուեալ ազգային փոքրամասնութեան հասարակական եւ մասնաւոր դպրոցական (մայրենի լեզուով) հիմնարկութիւնների, այլ եւ հոգացողութիւնը նրա (տուեալ ազգային փոքրամասնութեան) մշակութային այլ կարիքներին, ինչպէս եւ այդ նպատակով ի կեանս կոչուած հիմնարկները եւ ձեռնարկները վարելու գործը»:

Թէեւ օրէնքը մի առ մի չի թուած, ազգային դպրոցից դուրս, մշակոյթի միւս ճիւղերը, բայց հասկանալի են դրանք — թատրոն, դրականութիւն, դիտական, կրօնական եւ այլ կարգի հիմնարկներ:

Ամէն մի ազգային-մշակութային ինքնավարութիւն կազմակերպում է տուեալ փոքրամասնութեան անդամների մասնակցութեամբ, ընդհանուր ընտրական հիմունքներով: Ինքնավարական օրգանը իր իրաւասութեան սահմաններում կարող է պարտադիր կարգադրութիւններ հրատարակել: Նա կարող է նաեւ, ներքին նախարարութեան հսկողութեան տակ, տուրքեր սահմանել եւ գանձել: Այդ բաւական չէ: Երկրի կառավարութիւնն իր կողմից եւս պարտաւոր է պետական հարկերից բաժին հանել ամէն մի ազգային փոքրամասնութեան, ինչքան որ ելեւտացոյցով սահմանուած է:

Որ պետութեանն իրաւունք է վերապահուած՝ փոքրամասնութեանց ինքնավար մարմինների գործառնութիւնները վերահսկողութեան ենթարկելու, — հասկանալի է ինքնին:

«Բերլինէր Թագերգաթ»ի թղթակիցը, որի նկարագրութիւնից եւ առնուած վերոյիշեալ տողերը էսթոնիայի փոքրամասնութեանց ազ-